

«Հաստատում են»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարանի

Գեոլոգիական ֆակուլտետի Բ. Ս. Սերոբյան



22 մարտի 2021 թ.

## Կ Ա Ր Ծ Ի Ք

### Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Բ Դ Պ Ո Ւ Թ Յ Ա Ն

Ջուլիետա Գազիկի Հարթենյանի «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար դասիչ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ:

Ջուլիետա Գազիկի Հարթենյանի «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի ուսուցման գործընթացում կոլեկտիվ ուսուցման իրականացման հնարավորությունների վերհանմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի առաջին գուխը նվիրված է դաս-դասարանային համակարգում կոլեկտիվ ուսուցման իրականացման հիմնահարցերին ընդհանրապես և մասնավորապես հիմնական դպրոցի VII և VIII դասարանների «Ֆիզիկա» առարկայի ուսուցման հարցերին: Երկրորդ գլխում ներկայացվում է VII և VIII դասարանների «Ֆիզիկա» առարկայի փոխհաղորդման եղանակով ուսուցման մեթոդիկան և բերված են մանկավարժական գիտափորձի արդյունքները:

Ներկայացված հետազոտությունն ունի ինչպես տեսական այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Նրա շրջանակում մասնավորապես.

- մշակվել են հիմնական դպրոցի ֆիզիկայի դասավանդումը համալրող նոր մոտեցումներ,
- հանգամանալից կերպով մշակվել են առանձին թեմաների ուսուցման գործընթացի նոր երթուղիներ,

որոնց կիրառումը կնպաստի աշակերտների մոտ միասնական և համագործակցային աշխատանք կատարելու կարողությունների զարգացմանը ինչպես նաև նրանց առարկայական կարողությունների և հմտությունների խթանմանը, զարգացնելով որոնողական ընդունակություններ ու ստեղծագործական մտածողություն:

Հավելվածում բերված են բովանդակային առումով շատ լավ կազմված քարտ-նմուշների օրինակներ: Կարծում ենք, որ տարբեր թեմաների շրջանակում նման քարտերի կազմումը և կիրառումը օգտակար կլինի ֆիզիկայի ուսուցման գործընթացում: Ցանկալի կլիներ հետազայում դպրոցներում ունենալ նաև նման քարտային տարբերակների ձեռնարկ:

Ատենախոսության վերաբերյալ կան դիտարկումներ, որոնք հիմնականում արտահայտում են մեր կարծիքներն ու տպավորությունները աշխատանքի և նրա թեմատիկայի վերաբերյալ և բոլորովին չեն կարող արտահայտել կամ մատնանշել աշխատանքի թերացումները: Նշել ենք նաև աշխատանքում հանդիպող աննշան տեխնիկական վրիպակները, որոնք նկատել ենք.

1. Փոխհաղորդման մեթոդիկայով ուսուցումը հնարավորություն է տալիս, որ բոլոր սովորողները ակտիվորեն ընգրկված լինեն սովորելու և սովորեցնելու գործընթացին: Ինքնուրույն կերպով սովորելու կարողությունը պետք է ձևավորել հնարավորինս վաղ տարիքից և զարգացնել: Բացի այդ սովորողն ավելի հիմնավոր, ամուր և հղկված է դարձնում իր գիտելիքները երբ դրանք ներկայացնում, բացատրում և փոխանցում է ընկերոջը: Շատ անգամ աշակերտն ավելի լավ է հասկանում իր տարիքակից և մտածողությամբ իրեն մոտ ընկերոջ կողմից տրված բացատրությունը, քան ուսուցչինը: Այս ամենը միշտ էլ հայտնի է եղել և մարդկային, բնական ու այսպես կոչվող աշակերտակենտրոն ուսուցման գործընթացում փորձված մանկավարժը հաճախակի թույլ է տվել աշակերտների օգտակար փոխօգնություն և իմացածի ու կարողության փոխանցում: Նման մոտեցումների մշտական, բայց

չափավոր կիրառումը շատ օգտակար է և նույնիսկ անհրաժեշտ, սակայն կարծում ենք, որ ողջ ուսուցման պրոցեսը նման ձևով իրականացնելը անընդունելի է: Այս գաղափարներով չափազանց հրապուրվելը և տարաբնույթ մշտափոփոխ սխեմաների փորձարկումը (անկախ լոկալ գիտափորձերի արդյունքում արձանագրված դրական դինամիկայի) կարող է բերել ամորֆ վիճակի և կրթական քաոսի:

2. Մովորողների գործուն ընդգրկվածության գործակցի հաշվումը աշխատատար է, իսկ նրանում առկա գործակիցների որոշման մեթոդաբանությունը պարզորոշ չի ներկայացված, միգուցե հնարավոր չէ՞ կամ իմաստ չունի՞ դրանց որոշման մասին շատ խոսել: Հնարավոր է այդ բանաձևն էլ «զարգացնել»՝ նրանում ներառելով տարբեր ֆունկցիոնալ կախվածություններով արտահայտվող գործոններ, սակայն կարծում ենք, որ գնահատումը պետք է պարզ լինի և նմանօրինակ բանաձևերը որոշ իմաստով արհեստական են:
3. Ատենախոսական աշխատանքի ձևավորումն արված է խնամքով, անհրաժեշտ գծագրերով ու նկարներով: Շատ հազվադեպ հանդիպում են տեխնիկական վրիպակներ, որոնցից նկատել ենք 124 էջում ծավալի չափման միավորներում ցուցիչների բացակայությունը (30մ - ի փոխարեն պետք է լիներ 30մ<sup>3</sup>, 1500կգ/մ - ի փոխարեն՝ 1500կգ/մ<sup>3</sup>, 400մ - ի փոխարեն՝ 400մ<sup>3</sup>):

Սակայն պետք է նշել, որ այս դիտողությունները չեն ազդում այն գնահատականի վրա, որին արժանի է աշխատանքն ընդհանրապես: Ատենախոսությունում ստացված են շոշափելի արդյունքներ, որոնք իրենց արժանի գնահատականը ստացել, և որպես մանկավարժական նորույթ հողվածների տեսքով տպագրվել են մասնագիտական պարբերականներում:

**Եզրակացություն** - Նկատի ունենալով, որ Ջուլիետա Գազիկի Հարթենյանի ատենախոսական աշխատանքը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի տեսական ու գործնական նշանակություն և բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի (ԺԳ.00.02 դասիչով- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ) գիտական աստիճանի հայցման համար ՀՀ ԲՈՂ-ի կողմից

ներկայացվող պահանջներին, ուստի միջնորդում ենք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև, որպեսզի ատենախոսության հեղինակին շնորհվի մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի 2021 թվականի մարտի 22 - ի թիվ 9 նիստում:

Քննարկմանը մասնակցել են՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Ֆ. Մանուկյանը, ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Հ. Սարգսյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Սողոյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Նիկողոսյանը, մանկ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Հարությունյանը, մանկ. գիտությունների թեկնածու, Ն. Նազարյանը:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների  
ամբիոնի վարիչի ԺՊ, ֆ.մ.գ.թ., դոցենտ՝

Վ.Ֆ. Մանուկյան

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում են:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝



Կ. Պետրոսյան